

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

«Շնող համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի.

1.Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2) հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները.

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

2) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

3) Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգիրք»

4) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

5) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

6) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

1.1. *Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝*

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.

5) ենթականների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

2.Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը (նյութերը).

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

3. Մրցույթը կանցկացվի ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Շնող, գյուղ Շնող, փողոց 2, շենք 4/3), 2022 թվականի մայիսի 12-ին, ժամը՝ 12:00-ին:

4 .Դիմումներն ընդունվում են Շնողի համայնքապետարանի աշխատակազմում հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Շնող, գյուղ Շնող, փողոց 2, շենք 4/3 , հեռ.՝ 077 60-81-20), ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներին ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանը կապահովի հարցաշարերով և միաժամանակ կտրամադրի այն իրավական ակտերի ցանկը, որոնցից կազմված կլինի հարցազրույցի փուլի համար նախատեսված հարցաշարը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2022 թվականի մայիսի 2-ը՝ ժամը 18:00-ն :

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ